Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2025-2026 ուս. տարվա գիտական խորհրդի առցանց հարցման արտահերթ նիստի

ք.Երևան 09 հուլիսի 2026թ.

Ներկա էին՝ (հարցմանը մասնակցել են) գիտխորհրդի 20 անդամներից 17–ը:

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Մկրտչյան

Գիտական քարտուղար՝ ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. **ՀՀ գիտությունների Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության կողմից հայտարարված ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամների և արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթին մասնակցելու համար Ֆարմացիայի ինստիտուտի կողմից թեկնածուների առաջադրման հարցը:**

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1.1. Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ք.գ.թ, դոցենտ Աննա Ֆելիքսի Մկրտչյանի՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ասոցացված անդամների 2026 թվականի ընտրության մրցույթին մասնակցության երաշխավորման հարցը:

Եղույթ ունեցավ՝ Գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանը, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց, որ ՀՀ ԳԱԱ կողմից հայտարարվել է ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամների և արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունիսի 18-ի N 870-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԳԱԱ կանոնադրության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված «ՀՀ ԳԱԱ անդամների 2026 թվականի ընտրության մրցույթի կազմակերպման կարգի» համաձայն: Մրցույթն անցկացվում է ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատված մասնագիտությունների գծով թափուր տեղերի ցանկին համապատասխան: Նա նշեց, որ «Քիմիական և հարակից

գիտություններ» մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն ք.գ.թ, դոցենտ Աննա Ֆելիքսի Մկրտչյանը:

Գիտական քարտուղար Ա. Դադայանը համառոտ ներկայացրեց Աննա Մկրտչյանի անձնական գործը: Ա. Մկրտչյանը 2003-2008 թթ. սովորել է ԵՊՀ քիմիայի ֆակուլտետի «Դեղագործական քիմիա» բաժինը: 2008-2011թթ. հանդիսացել է «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի առկա ասպիրանտ, իսկ 22.10.2012թ. ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի կողմից ստացել է քիմիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: 2012 թ.-ին աշխատանքի է անցել քիմիայի ֆակուլտետի «Դեղագործական քիմիայի» ամբիոնի «Հետերոցիկլիկ ամինաթթուների սինթեզի» բազային լաբորատորիայում՝ որպես կրտսեր գիտաշխատող, իսկ 2014թ. մարտ ամսից՝ որպես գիտաշխատող: 2014–մինչ օրս հանդիսանում է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտ «Ֆարմքիմիայի և ֆարմակագնոզիայի» ամբիոնի (նախկինում դեղագիտության ամբիոնի) դոցենտ, ինչպես նաև 2017-2023թթ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի գիտական և ներդրումային հարցերի գծով փոխտնօրեն, իսկ 2023թ մինչ օրս՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն: Ա. Մկրտչյանը 2014-2022թթ. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի գիտաշխատող, 2022թ.- մինչ օրս՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի ԳՀ կենտրոնի ղեկավար:

Ա. Մկրտչյանը հեղինակ է ավելի քան 30 գիտական հոդվածների և 2 ուսումնամեթոդական աշխատանքի: Վերջին 5 տարում հրատարակել է 13 գիտական հոդված՝ բարձր ազդեցության գործակից ունեցող գիտական հանդեսներում:

Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 1 թեկնածուական ատենախոսություններ, 20-ից ավել մագիստրոսական թեզեր և ավարտական աշխատանքներ: Ղեկավարել և մասնակցել է ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային դրամաշնորհների կատարմանը:

Որոշեցին՝ (միաձայն) բաց քվեարկությամբ առաջադրել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն, ք.գ.թ, դոցենտ Աննա Ֆելիքսի Մկրտչյանի թեկնածությունը՝ «Քիմիական և հարակից գիտություններ» մասնագիտությամբ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ասոցացված անդամների 2026թ.-ի ընտրության մրցույթին մասնակցելու համար:

1.2. Լսեցին՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ կ.գ.դ, պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյանի՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ասոցացված անդամների 2026 թվականի ընտրության մրցույթին մասնակցության երաշխավորման հարցը:

Եղույթ ունեցավ՝ Գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանը, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց, որ ՀՀ ԳԱԱ կողմից հայտարարվել է ՀՀ

ԳԱԱ ասոցացված անդամների և արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունիսի 18-ի N 870-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԳԱԱ կանոնադրության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված «ՀՀ ԳԱԱ անդամների 2026 թվականի ընտրության մրցույթի կազմակերպման կարգի» համաձայն: Մրցույթն անցկացվում է ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատված մասնագիտությունների գծով թափուր տեղերի ցանկին համապատասխան:

Ա. Դադայանը նշեց, որ «Կենսաբանական և հարակից գիտություններ» մասնագիտությամբ ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամի թափուր տեղերի համար հայտարարված մրցույթին մասնակցելու հայտ է ներկայացրել Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ կ.գ.դ, պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյանը: Գիտական քարտուղար Ա. Դադայանը համառոտ ներկայացրեց Հովիկ Փանոսյանի անձնական գործը: Հովիկ Հարությունի Փանոսյանը ծնվել է 18.11.1976 թ.-ին, ՀՀ Արմավիր քաղաքում: 1994-1999 թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետը, իսկ 1999-2002 թթ. ուսանել է ԵՊՀ ասպիրանտուրայում: 2003 թ. ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան (Գ.00.07 «Մանրէաբանություն»): 2023 թ. ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ում պաշտպանել է դոկտորական ատենախոսություն՝ ստանալով կենսաբանական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2011 թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 2025 թ.՝ պրոֆեսորի գիտական կոչում: Հ.Հ. Փանոսյանը հեղինակ է 3 ուսումնամեթոդական ձեռնարկների, ավելի քան 90 գիտական հոդվածների, հանդիսանում է Springer Nature և Elsevier Academic Press հրատարակչություններում տպագրված 5 գրքերի համախմբագիր: Վերջին 5 տարում հրատարակել է 14 գիտական հոդված՝ բարձր ազդեցության գործակից ունեցող հանդեսներում, 3 գիրք և 7 գրքի գլուխներ: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 2 թեկնածուական ատենախոսություններ, 32 մագիստրոսական թեզեր և 56 ավարտական աշխատանքներ:

Որոշեցին՝ (միաձայն) բաց քվեարկությամբ առաջադրել ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի վարիչ, կ.գ.դ, պրոֆեսոր Հովիկ Հարությունի Փանոսյանի թեկնածությունը՝ «Կենսաբանական և հարակից գիտություններ» մասնագիտությամբ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ասոցացված անդամների 2026թ.-ի ընտրության մրցույթին մասնակցելու համար:

1.3. ***Լսեցին՝*** Մեծ Բրիտանիայի Լաֆբորոյի համալսարանի օրգանական քիմիայի էմերիտուս պրոֆեսոր Անդրեյ Վ. Մալկովի՝ ՀՀ Գիտությունների ազգային

ակադեմիայի արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթին մասնակցության երաշխավորման հարցը:

Եզրույթ ունեցավ՝ Գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանը, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց, որ ՀՀ ԳԱԱ կողմից հայտարարվել է ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամների և արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունիսի 18-ի N 870-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԳԱԱ կանոնադրության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված «ՀՀ ԳԱԱ անդամների 2026 թվականի ընտրության մրցույթի կազմակերպման կարգի» համաձայն: Մրցույթն անցկացվում է ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատված մասնագիտությունների գծով թափուր տեղերի ցանկին համապատասխան:

Ա. Դադայանը նշեց, որ Անդրեյ Մալկովը սերտորեն համագործակցում է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի հետ, որն արտահայտվում է համատեղ տպագրությունների, քիմիայի և բժշկական քիմիայի ոլոտրտում պարբերաբար իրականացվող գիտական սեմինարների տեսքով:

Գիտական քարտուղար Ա. Դադայանը գիտխորհրդի անդամներին համառոտ ներկայացրեց Անդրեյ Վ. Մալկովի կենսագրությունը: Ա. Մալկովը օրգանական քիմիայի էմերիտուս պրոֆեսոր է, Մեծ Բրիտանիայի Լաֆբորոյի համալսարանի Քիմիայի ամբիոնի երկարամյա պրոֆեսոր և միջազգային ճանաչում ունեցող գիտնական՝ ասիմետրիկ կատալիզի և օրգանական սինթեզի բնագավառում: 1982 թվականին ավարտել է Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի քիմիայի ֆակուլտետը, իսկ 1986 թվականին ՌԴ ԳԱ Նեսմեյանովի անվան էլեմենտօրգանական միացությունների ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսությունը: 1992 թվականից գիտական գործունեությունը շարունակել է Միացյալ Թագավորությունում՝ աշխատելով Իսթ Անգլիայի, Լեսթերի և Գլազգոյի համալսարաններում, իսկ 2008 թվականին նշանակվել է Լաֆբորոյի համալսարանի օրգանական քիմիայի պրոֆեսոր: 2025 թվականից հանդիսանում է նույն համալսարանի օրգանական քիմիայի էմերիտուս պրոֆեսոր: Ա. Վ. Մալկովի գիտական հետաքրքրություններն ընդգրկում են ասիմետրիկ կատալիզը, օրգանոկատալիզը, կենսաբանորեն ակտիվ բնական միացությունների ամբողջական սինթեզը, էլեկտրասինթեզը և նոր ֆունկցիոնալ նյութերի մշակումը: Նա հեղինակ է ավելի քան 160 գրախոսվող գիտական հոդվածների: Նրա գիտական խմբի կողմից մշակված *Kenamide* և *Sigamide* կատալիզատորները առևտրայնացվել են Sigma-Aldrich (Merck) ընկերության կողմից, իսկ իրականացված հետազոտությունները ֆինանսավորվել են Եվրոպական միության և Մեծ Բրիտանիայի առաջատար գիտական հիմնադրամների կողմից՝ ընդհանուր ավելի քան 5 միլիոն ֆունտ ստեռլինգի չափով: Պրոֆեսոր Մալկովը հանդիսանում է Թագավորական

քիմիական ընկերության (Royal Society of Chemistry) անդամ (Fellow) և Chartered Chemist, ինչպես նաև Ամերիկյան քիմիական ընկերության անդամ: Նա պարբերաբար հանդես է գալիս որպես հրավիրյալ և պլենար զեկուցող միջազգային հեղինակավոր գիտաժողովներում: Վերջին տարիներին բազմիցս մասնակցել է Հայաստանում անցկացվող «New Trends in Chemistry» և «Chemistry Mall Scientific School» միջազգային գիտաժողովներին՝ նպաստելով հայ և բրիտանացի գիտնականների միջև գիտական համագործակցության զարգացմանը:

Որոշեցին՝ (միաձայն) բաց քվեարկությամբ առաջադրել պրոֆեսոր Անդրեյ Մալկովի թեկնածությունը՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթին մասնակցելու համար:

1.4. ***Լսեցին՝*** Ռուսաստանի Դաշնության «Դեղամիջոցների որակի ապահովման հարցեր» գիտագործնական հանդեսի գլխավոր խմբագիր, Ռուսաստանի բժշկական համալսարանի ռեկտորի խորհրդական, դ.գ.դ. պրոֆեսոր, Արտեմ Ալեքսանդրի Մարկարյանի՝ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթին մասնակցության երաշխավորման հարցը:

Ելույթ ունեցավ՝ Գիտական խորհրդի քարտուղար, ք.գ.թ., դոցենտ Ա. Դադայանը, ով գիտխորհրդի անդամներին հաղորդեց, որ ՀՀ ԳԱԱ կողմից հայտարարվել է ՀՀ ԳԱԱ ասոցացված անդամների և արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի հունիսի 18-ի N 870-Ն որոշմամբ հաստատված ՀՀ ԳԱԱ կանոնադրության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի կողմից հաստատված «ՀՀ ԳԱԱ անդամների 2026 թվականի ընտրության մրցույթի կազմակերպման կարգի» համաձայն: Մրցույթն անցկացվում է ՀՀ ԳԱԱ նախագահության կողմից հաստատված մասնագիտությունների գծով թափուր տեղերի ցանկին համապատասխան:

Ա. Դադայանը նշեց, որ Արտեմ Ալեքսանդրի Մարկարյանը սերտ համագործակցում է ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի հետ, մասնավորապես, կարևորվում են դեղագիտության ոլորտում նրա հետ իրականացվող խորհրդակցությունները և համատեղ հետազոտությունները:

Գիտական քարտուղար Ա. Դադայանը համառոտ ներկայացրեց Արտեմ Մարկարյանի կենսագրությունը: Արտեմ Ալեքսանդրի Մարկարյանը դեղագործական գիտությունների դոկտոր է, պրոֆեսոր, Ռուսաստանի բժշկական համալսարանի ռեկտորի խորհրդական, «Դեղամիջոցների որակի ապահովման հարցեր» գիտագործնական հանդեսի գլխավոր խմբագիր, ինչպես նաև ՌԴ Գիտության և բարձրագույն կրթության նախարարության Բարձրագույն ատեստավորման հանձնաժողովի բժշկակենսաբանական և դեղագործական գիտությունների փորձագիտական խորհրդի անդամ և «Դեղամիջոցներ»

ստանդարտացման տեխնիկական կոմիտեի նախագահ։ Ա. Մարկարյանը 1997 թվականին գերազանցությամբ ավարտել է Ի.Մ. Սեչենովի անվան Մոսկվայի պետական բժշկական համալսարանի դեղագործական ֆակուլտետը։ 2000 թվականին ստացել է դեղագործական գիտությունների թեկնածուի, 2005 թվականին՝ դեղագործական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 2010 թվականին՝ պրոֆեսորի գիտական կոչում։ 2006 թվականից հանդիսանում է Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, իսկ 2008 թվականից՝ իսկական անդամ։ Ա. Մարկարյանի գիտական գործունեությունը նվիրված է բնական ծագման նորարարական դեղամիջոցների մշակման և ստանդարտացման հիմնավորմանը։ Նա ավելի քան 200 գիտական աշխատությունների հեղինակ է, այդ թվում՝ դասագրքի, 8 մենագրության, 8 ուսումնամեթոդական ձեռնարկի, Ռուսաստանի Դաշնության 4 գյուտի արտոնագրի և արտասահմանյան հեղինակավոր գիտական հանդեսներում հրատարակված 23 հոդվածի։ Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են 8 թեկնածուական և 3 դոկտորական ատենախոսություններ։ Աշխատանքային գործունեության ընթացքում զբաղեցրել է դասախոսի, դոցենտի և ամբիոնի վարիչի պաշտոններ Ի.Մ. Սեչենովի անվան Առաջին Մոսկվայի պետական բժշկական համալսարանում, 2015–2021 թվականներին ղեկավարել է Ռուսաստանի գիտության և մշակույթի կենտրոնը Կոպենհագենում, իսկ 2022 թվականից հանդիսանում է Ռուսաստանի բժշկական համալսարանի ռեկտորի խորհրդական՝ դեղագործական կրթության զարգացման և միջազգային համագործակցության հարցերով։ 2013 թվականից ղեկավարում է «Դեղամիջոցների որակի ապահովման հարցեր» գիտագործնական հանդեսը։ Վերջին տարիներին Ա. Մարկարյանը ակտիվ գիտակրթական համագործակցություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության գիտական և կրթական կազմակերպությունների հետ, մասնավորապես՝ ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի, Մխիթար Հերացու անվան Երևանի պետական բժշկական համալսարանի և ՀՀ ԳԱԱ գիտական կառույցների հետ։

Պրոֆեսոր Ա. Մարկարյանը մասնակցել է դոկտորական ատենախոսությունների պաշտպանությանն ու գրանտային ծրագրերի խորհրդատվությանը, ներգրավված է եղել ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ին կից մասնագիտական խորհրդում, համագործակցել է ԵՊԲՀ-ի և ՀՀ ԳԱԱ կառույցների հետ, աջակցել գիտական հոդվածների, ատենախոսությունների և կրթական ծրագրերի փորձագիտական գնահատմանը։ 2026 թվականին հանդես է եկել որպես ամերիկյան «**Functional Foods in Health and Disease»** գիտական հանդեսում հրապարակման ներկայացված հայ գիտնականների հոդվածի պաշտոնական գրախոս՝ նպաստելով հայ-ռուսական գիտական համագործակցության զարգացմանը։

Որոշեցին՝ (միաձայն) բաց քվեարկությամբ առաջադրել դ.գ.դ. պրոֆեսոր, Արտեմ Ալեքսանդրի Մարկարյանի թեկնածությունը՝ ՀՀ Գիտությունների ազգային

ակադեմիայի արտասահմանյան անդամների 2026 թվականի ընտրության մրցույթին մասնակցելու համար:

2. Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ՝
բ.գ.թ, դոցենտ **Ա. Մկրտչյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝
բ.գ.թ., դոցենտ **Ա. Դադայան**